ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն 0071
Ք. Երևան, Նուբարաշեն 1/3

Հեռ (010) - 47 - 53 - 22
Էլ. Հասցե hapakhk@gmail.com

N26-53/21 01.06.2021թ.

«ԹՎԱՆՉՔ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ ՍԼԱՎԻԿ ԱԶԱՏՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔ 15ՓՈՂ, 16

Հարգելի պարոն Ազատյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 26-ի գրության՝ տեղեկացնում եմ, որ 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-21/06 ծածկագրով պետության կարիքների համար լվացքի և մաքրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի շրջանակներում Ձեր կազմակերպության կողմից մի քանի անգամ խախտվել են պայմանագրի պահանջները. մասնավորապես Ձեր կազմակերպության կողմից Պատվիրատուին հանձված լվացքն եղել է ոչ մաքուր, ինչը հակասում է նշված պայամագրի Հավելված N 1-ի պահանջներին:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից բարձրացված խնդրին՝ կապված ծառայությունների մատուցման ծավալների ավելացմանը, տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրում նախատեսված չի եղել ամսական որևէ ծավալ, այլ նշված է եղել ընդհանուր տարեկան քանակ: Հարկ եմ համարում նշել, որ սույն ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի հրավերում նույնպես ամսական ծավալի մասին տեղեկատվություն չի եղել, քանի որ կախված իրավիճակից այն հնարավոր չէ կանխատեսել:

Նշեմ նաև, որ պայմանագրում որպես առավելագույն քանակ սահմանված է եղել 30.000 (երեսուն հազար) կիլոգրամ լվացքի և մաքրման ծառայությունների մատուցումը, սույն պայմանագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը սկսվել է 2021 թվականի հունվար ամսից, և մինչև օրս մատուցվել է ծառայությունների ընդհանուր ծավալից ընդամենը 6.032 (վեց հազար երեսուներկու) կիլոգրամ լվացքի մատուցման ծառայություն (ընդանուր պայմանագրի ծավալի շուրջ 20%-ը, ծառայությունների մատուցման ժամկետի շուրջ 40%-ի ընթացքում): Ինչը անհասկանալի է դարձնում Ձեր կողմից ծավալների ավելացման խնդրի բարձրացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և Ձեր կողմից ներկայացված գրությունը, ինչպես նաև հիմք ընդունելով նշված պայմանագրի 2.1.3 կետը՝ որոշվել է միակողմանիորեն լուծել 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-21/06 ծածկագրով պետության կարիքների համար լվացքի և մաքրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԵՐԳԵՅ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Հոգեբանական առողջության պահպանման
ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Սերգեյ Խաչատրյանին

Համաձայն թիվ ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-21/06 «Հոգեբանական առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Թվանչք» ՍՊԸ-ի միջև կնքված լվացքի և մաքրման ծառայությունների մատուցման պայմանագրի վերաբերյալ՝ «Թվանչք» ՍՊԸ-ն մինչև օրս կատարում է պայմանագրով նախատեսված ծառայությունները, սակայն Հավելված 1-ում նախատեսված սպիտակեղենների քանակը՝ (քաշը) ըստ ամիսների գերազանցում է նախատեսվածից:

Քանի որ «Թվանչք» ՍՊԸ-ի տեխնիկական միջոցները հնարավորություն չեն տալիս մատուցել լվացքի ծառայություն նախատեսվածից ավելին, ուստի հաշվի առնելով մեր լվացքատան տեխնիկական սահմանափակումները՝ խնդրում ենք Ձեզ լուծել վերոնշյալ պայմանագիրը:

Հարգանքով՝

«Թվանչք» ՍՊԸ-ի տնօրեն _____ Ս. Ազատյան

26.05.2021

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՍՏԱՑ 2929/21
«02» 06 2021